Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 847 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐԵՎԱՅԻՆ ՈՉ ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ԹԵՐՄՈՍԻՖՈՆԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Սոցիալական պայմանների բարելավման և էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրի թվով 46 կարիքավոր ընտանիքների համար անհատույց արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում:<br>Կարիքավոր ընտանիքների ցանկը հաստատվել է Դիլիջան համայնքի և Խաչարձան բնակավայրի վարչական ղեկավարների կողմից: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 13,742,730 դրամ |
| 7. | Բարեգործությունն ստացողը | Խաչարձան բնակավայրի թվով 46 կարիքավոր ընտանիքներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Խաչարձան բնակավայրի թվով 46 կարիքավոր ընտանիքների համար արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում: Նախատեսվում է իրակա-նացնել 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, արժեքը՝ 13,742,730 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 46 բնակիչների տան տանիքների ամրակցման, ջրատաքացուցիչ կայանների ոտնակների և ջրատաքացուցիչների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակների անցկացման և ջրատաքացուցիչ կայաններին միացման աշխատանքների իրականացում՝ 13,742,730 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան, Խաչարձանի համայնքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ